ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 216.6. Հասարակական կազմակերպության կողմից հայց հարուցելը

1. Հասարակական կազմակերպությունը իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության ~~ոլորտում~~ *և հաշման-դամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտներում :*

2. ~~Կազմակերպությունը~~ *Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կազմակերպու-թյունը* սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝

1) հայցադիմումը բխում է կազմակերպության կանոնադրական նպատակներից և խնդիրներից և ուղղված է կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը.

2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրութային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննար-կումներին կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, և

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 2-րդ մասում նշված ոլորտում:

3. Հասարակական կազմակերպությունը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե համարվում է հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպություն (նրա կանոնադրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը սահմանված է որպես նպատակ և անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք են) և հայց

ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում:

4. Հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող հասարակական կազմակեր-պությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել հետևյալ դեպքերում՝

1) խախտվել է հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի՝ հաշմանդամության հիմքով խտրականությունից պաշտպանվելու իրավունքը,

խախտվել է հաշմանդամություն ունեցող անձի խտրականությունից պաշտպանվելու իրավունքը և, որը, ելնելով առողջական վիճակից կամ այլ հանգամանքից չի կարող անձամբ ներկայացնել իր իրավունքները և օրինական շահերը դատարանում:

(216.6-րդ հոդվածը լրաց. 16.12.16 ՀՕ-38-Ն)